«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/53-1

ք. Երևան «16» 06 2021թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ը ի դեմս տնօրենի ժ/պ՝ Գ. Ավետիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Էկոմիքս» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ս. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1057278 (մեկ միլիոն հիսունյոթ հազար երկու հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն

ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	«Էկոմիքս» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78	ՀՀ, ք. Երևան, Ա. Բաբաջանյանի 169
«Ամերիա բանկ» ՓԲԸ	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000358920100	Հ/Հ 20528220702110001
ՀԾՀ 00000911	ՀՎՀՀ 01255701
տնօրեն Մ/պ ----------Գ. Ավետիսյան	տնօրեն ----------Ս. Գասպարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
L.S	L.S

Հավելված
«16» 06 2021թ. կնքված
ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/53-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ* - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չ/հ	Ապրանքի								Մատակարարման		
	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը**	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չափման միավորը	Միավոր գինը (ՀՀ դրամ)	Գումար (ՀՀ դրամ)	Ընդհանուր քանակը	Հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը
4	44163200	Կցորդիչ-անցում մետաղապլաստ խողովակի16*20մմ	Kaldo.Co	Կցորդիչ-անցումմետաղապլաստ խողովակի 16*20մմ x 1/2"պ արտաին պարույր	հատ	1444	7220	5	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	5	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
5	44163200	Կցորդիչ-անցում մետաղապլաստ խողովակի 16*20մմ x 1/2"պ	Kaldo.Co	Կցորդիչ-անցում մետաղապլաստ խողովակի 16*20մմ x 1/2"պ ներքին պարույր	հատ	1444	7220	5	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	5	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
11	44163200	Խողովակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=50	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Խողովակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=50, երկարությունը 2մ ,հաստությունը 2.8մմ, սպիտակ կամ մոխրագույն	հատ	854	21350	25	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	25	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
12	44163200	Խողովակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=50	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Խողովակ հետադարձի պոլիպրոպիլենային (PP) d=50, երկարությունը 1մ ,հաստությունը 2.8մմ, սպիտակ կամ մոխրագույն	հատ	484	14520	30	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	30	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
13	44163200	Խողովակ հետադարձի PP պոլիպրոպիլ	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Խողովակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=50, երկարությունը 0.5մ ,հաստությունը 2.8մմ,	հատ	344	10320	30	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	30	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20

		ենային d=50		սպիտակ կամ մոխրագույն							օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
14	44163200	Անկյունակ հետադարձի PP պոլիպրոպիլ ենային d=50, 45⁰	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Անկյունակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=50, 45⁰, հաստությունը 2.8մմ, սպիտակ կամ մոխրագույն	հատ	114	3420	30	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	30	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
15	44163200	Անկյունակ հետադարձի PP պոլիպրոպիլ ենային d=50, 90⁰	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Անկյունակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=50, 90⁰, հաստությունը 2.8մմ սպիտակ կամ մոխրագույն	հատ	114	2280	20	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
16	44163200	Եռաբաշխիչ հետադարձի PP պոլիպրոպիլ ենային d=50x50x50 ուղիղ	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Եռաբաշխիչ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=50x50x50 ուղիղ, հաստությունը 2.8մմ, սպիտակ կամ մոխրագույն	հատ	224	4480	20	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
17	44163200	Եռաբաշխիչ հետադարձի PP պոլիպրոպիլ ենային d=50x50x50 թեք	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Եռաբաշխիչ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=50x50x50 թեք, հաստությունը 2.8մմ, սպիտակ կամ մոխրագույն	հատ	224	4480	20	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
18	44163200	Կցամաս հետադարձի PP պոլիպրոպիլ ենային d=50x50	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Կցամաս հետադարձի PP պոլիպրոպիլենային d=50x50 սպիտակ կամ մոխրագույն	հատ	194	1940	10	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
19	44163200	Ռետինե խցուկ հետադարձի PP պոլիպրոպիլ ենային խողովակից	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Ռետինե խցուկ հետադարձի PP պոլիպրոպիլենային խողովակից անցում թուջ կամ մետաղ (գոֆրե) d=50	հատ	294	2940	10	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:

		անցում թուջ կամ մետաղ (գոֆրե) d=50									
20	44163200	Խողովակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Խողովակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100 երկարությունը 2մ ,հաստությունը 2.8մմ, սպիտակ կամ մոխրագույն	հատ	2144	53600	25	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	25	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
21	44163200	Խողովակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Խողովակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100 երկարությունը 1մ ,հաստությունը 2.8մմ, սպիտակ կամ մոխրագույն	հատ	1144	28600	25	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	25	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
22	44163200	Խողովակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Խողովակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100 երկարությունը 0.5մ ,հաստությունը 2.8մմ, սպիտակ կամ մոխրագույն	հատ	784	19600	25	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	25	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
23	44163200	Անկյունակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100, 90^0	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Անկյունակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100, 90^0 սպիտակ կամ մոխրագույն	հատ	284	5680	20	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
24	44163200	Անկյունակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100, 45^0	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Անկյունակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100, 45^0 սպիտակ կամ մոխրագույն	հատ	284	5680	20	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
25	44163200	Եռաբաշխիչ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x50x100ուղիղ	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Եռաբաշխիչ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x50x100ուղիղ, հաստությունը 2.8մմ, սպիտակ կամ մոխրագույն	հատ	484	4840	10	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:

26	44163200	Եռաբաշխիչ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x50x100 թեք	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Եռաբաշխիչ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x50x100 թեք, հաստությունը 2.8մմ, սպիտակ կամ մոխրագույն	հատ	524	5240	10	ՀՀ, ք Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	10	Պայմանագիրը ուժի մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
27	44163200	Եռաբաշխիչ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x100x100ուղիղ	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Եռաբաշխիչ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x100x100 ուղիղ, հաստությունը 2.8մմ, սպիտակ կամ մոխրագույն	հատ	554	8310	15	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	15	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
28	44163200	Եռաբաշխիչ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x100x100 թեք	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Եռաբաշխիչ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x100x100 թեք, հաստությունը 2.8մմ, սպիտակ կամ մոխրագույն	հատ	594	8910	15	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	15	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
29	44163200	Խաչուկ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x100x100x100 թեք	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Խաչուկ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x100x100x100 թեք երկու կողմն 45^0 հաստությունը 2.8մմ, սպիտակ կամ մոխրագույն	հատ	1614	4842	3	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
30	44163200	Խաչուկ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x100x100x100 ուղիղ	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Խաչուկ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x100x100x100 ուղիղ հաստությունը 2.8մմ, սպիտակ կամ մոխրագույն	հատ	1614	4842	3	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
31	44163200	Կցամաս հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x100	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Կցամաս հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x100 հաստությունը 2.8մմ, սպիտակ կամ մոխրագույն	հատ	384	7680	20	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
32	44163200	Փոխակերպիչ հետադարձի	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Փոխակերպիչ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x50 ուղիղ հաստությունը 2.8մմ, սպիտակ	հատ	234	2340	10	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20

		PP պոլիպրոպիլենային d=100x50 ուղիղ		կամ մոխրագույն							օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
33	44163200	Ստուգատեղ հետադարձի PP պոլիպրոպիլենային .d=100	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Ստուգատեղ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100 հաստությունը 2.8մմ, սպիտակ կամ մոխրագույն	հատ	724	3620	5	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	5	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
34	44163200	Ռետինե խցուկ հետադարձի PP պոլիպրոպիլենային խողովակից անցում թուջ կամ մետաղ (գոֆրե) d=100	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Ռետինե խցուկ հետադարձի PP պոլիպրոպիլենային խողովակից անցում թուջ կամ մետաղ (գոֆրե) d=100	հատ	424	4240	10	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
35	44423640	Ռետինե միջադիր d= 1/2"	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Ռետինե միջադիր տափողակ d= 1/2" չափերի ճկախողովակների հանար	հատ	10	300	30	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	30	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
36	44423640	Ռետինե միջադիր d= 3/4"	Մայեռ Պլաստ ՍՊԸ	Ռետինե միջադիր տափողակ d= 3/4" չափերի ճկախողովակների հանար	հատ	10	300	30	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	30	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
37	44163200	Ամրան (կլիպս) Մ/Պ խողովակի 1/2 համար դյուբել պտուտակով	Էկոպրոֆ ՍՊԸ	Ամրան (կլիպս) Մ/Պ խողովակի 1/2 համար դյուբել պտուտակով	հատ	34	3400	100	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	100	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:

38	44163200	Ամրան (կլիպս) Մ/Պ խողովակի 3/4 համար դյուբել պտուտակով	Էկոպրոֆ ՍՊԸ	Ամրան (կլիպս) Մ/Պ խողովակի 3/4 համար դյուբել պտուտակով	հատ	39	3900	100	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	100	Պայմանագիրը ուժի մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
43	44163200	Կցաշուրթ պողպատե d=50	Մանյա Հարությունյան Ա/Ձ	Կցաշուրթ պողպատե d=50 ГОСТ 12820-80	հատ	2244	22440	10	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
54	44163200	Անցում բրոնզե . 1/2" - 1/2" ա/պ	ՌԴ	Անցում բրոնզե (բաչոկ) հավասար կողմերով . 1/2" - 1/2" ա/պ միջնամասում մանեկադարձակ բանալու տեղով	հատ	284	5680	20	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
56	44163200	Անցում բրոնզե . 3/4"-3/4" ա/պ	ՌԴ	Անցում բրոնզե (բաչոկ) հավասար կողմերով . 3/4"-3/4" ա/պ միջնամասում մանեկադարձակ բանալու տեղով	հատ	484	4840	10	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
68	44411425	Սողնակ մետաղական d=200	GS.CO	Սողնակ մետաղական d=200 կցաշուրթային, թափանիվով ամբողջ շրջան սողնակի միջուկի ,ռետինե միջադիրը փոխելու հնարավորությամբ	հատ	87724	350896	4	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	4	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
69	44411425	Սողնակ մետաղական d=150	GS.CO	Սողնակ մետաղական d=150 կցաշուրթային, թափանիվով ամբողջ շրջան սողնակի միջուկի ,ռետինե միջադիրը փոխելու հնարավորությամբ	հատ	38684	154736	4	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	4	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
70	44411425	Սողնակ մետաղական d=100	GS.CO	Սողնակ մետաղական d=100 կցաշուրթային, թափանիվով ամբողջ շրջան ,սողնակի միջուկի ռետինե միջադիրը	հատ	36124	216744	6	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	6	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20

				փոխելու հնարավորությամբ							օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
75	44411751	Ճկախողովակ d=1/2" , 70սմ	Venus	Ճկախողովակ d=1/2" , 70սմ,մետաղական նիկելապատ գործվացքով ,նախատեսված ծորակից ջրի փականին միացնելու համար երկու կողմը մանեկ	հատ	834	25020	30	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	30	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
76	44521120	Փական կախովի 70մմ	Extra	Փական կախովի 70մմ երեք բանալիով համարժեք ռուսական արտադրանքի	հատ	1284	12840	10	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:
77	44511340	Գայլիկոն կոնաձև	Step Drill	Գայլիկոն կոնաձև 4-32 մմ մետաղի համար պոչը 10մմ	հատ	3994	7988	2	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87	2	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 25.12.2021թ.:

Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, համապատասխան սերտիֆիկատով, անհրաժեշտության դեպքում գործարանային փաթեթավորման: Էլեկտրական ապրանքները պետք է լինեն գործարանային փաթեթավորմամբ, ունենան համապատասխան անձնագիր կամ որակի հավաստագիր: Մատակարարումն ու բեռնափոխադրումը իրականացնում է մատակարարը Պատվիրատուի նշած վայր:

***Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

ԳՆՈՐԴ

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300003589201 00
ՀՎՀՀ 00000911

տնօրենի մ/ա ---------- Գ. Ավետիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Էկոմիքս» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ա. Բաբաջանյանի 169
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052822070211001
ՀՎՀՀ 01255701

տնօրեն ---------- Ս. Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

«16» 06 2021թ. կնքված
ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/53-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												Ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
4	44163200	Կցորդիչ-անցում մետաղապլաստ խողովակի16*20մ	-	-	-	-	-	7220	7220	7220	7220	7220	7220	7220	7220
5	44163200	Կցորդիչ-անցում մետաղապլաստ խողովակի 16*20մմ x 1/2"պ	-	-	-	-	-	7220	7220	7220	7220	7220	7220	7220	7220
11	44163200	Խողովակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=50	-	-	-	-	-	21350	21350	21350	21350	21350	21350	21350	21350
12	44163200	Խողովակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=50	-	-	-	-	-	14520	14520	14520	14520	14520	14520	14520	14520
13	44163200	Խողովակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=50	-	-	-	-	-	10320	10320	10320	10320	10320	10320	10320	10320

14	44163200	Անկյունակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=50, 45⁰	-	-	-	-	-	3420	3420	3420	3420	3420	3420	3420	3420
15	44163200	Անկյունակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=50, 90⁰	-	-	-	-	-	2280	2280	2280	2280	2280	2280	2280	2280
16	44163200	Եռաբաշխիչ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=50x50x50 ուղիղ	-	-	-	-	-	4480	4480	4480	4480	4480	4480	4480	4480
17	44163200	Եռաբաշխիչ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=50x50x50 թեք	-	-	-	-	-	4480	4480	4480	4480	4480	4480	4480	4480
18	44163200	Կցամաս հետադարձի PP պոլիպրոպիլենային d=50x50	-	-	-	-	-	1940	1940	1940	1940	1940	1940	1940	1940
19	44163200	Ռետինե խցուկ հետադարձի PP պոլիպրոպիլենային խողովակից անցում թուջ կամ մետաղ (գոֆրե) d=50	-	-	-	-	-	2940	2940	2940	2940	2940	2940	2940	2940
20	44163200	Խողովակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100	-	-	-	-	-	53600	53600	53600	53600	53600	53600	53600	53600
21	44163200	Խողովակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100	-	-	-	-	-	28600	28600	28600	28600	28600	28600	28600	28600

22	44163200	Խողովակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100	-	-	-	-	-	19600	19600	19600	19600	19600	19600	19600	19600
23	44163200	Անկյունակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100, 90⁰	-	-	-	-	-	5680	5680	5680	5680	5680	5680	5680	5680
24	44163200	Անկյունակ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100, 45⁰	-	-	-	-	-	5680	5680	5680	5680	5680	5680	5680	5680
25	44163200	Եռաբաշխիչ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x50x100ուղիղ	-	-	-	-	-	4840	4840	4840	4840	4840	4840	4840	4840
26	44163200	Եռաբաշխիչ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x50x100 թեք	-	-	-	-	-	5240	5240	5240	5240	5240	5240	5240	5240
27	44163200	Եռաբաշխիչ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x100x100ուղիղ	-	-	-	-	-	8310	8310	8310	8310	8310	8310	8310	8310
28	44163200	Եռաբաշխիչ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x100x100 թեք	-	-	-	-	-	8910	8910	8910	8910	8910	8910	8910	8910
29	44163200	Խաչուկ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x100x100x100 թեք	-	-	-	-	-	4842	4842	4842	4842	4842	4842	4842	4842

30	44163200	Խաչուկ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x100x100x100 ուղիղ	-	-	-	-	-	4842	4842	4842	4842	4842	4842	4842	4842
31	44163200	Կցամաս հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x100	-	-	-	-	-	7680	7680	7680	7680	7680	7680	7680	7680
32	44163200	Փոխակերպիչ հետադարձի PP պոլիպրոպիլենային d=100x50 ուղիղ	-	-	-	-	-	2340	2340	2340	2340	2340	2340	2340	2340
33	44163200	Ստուգատեղ հետադարձի PP պոլիպրոպիլենային . d=100	-	-	-	-	-	3620	3620	3620	3620	3620	3620	3620	3620
34	44163200	Ռետինե խցուկ հետադարձի PP պոլիպրոպիլենային խողովակից անցում թուջ կամ մետաղ (գոֆրե) d=100	-	-	-	-	-	4240	4240	4240	4240	4240	4240	4240	4240
35	44423640	Ռետինե միջադիր d= 1/2"	-	-	-	-	-	300	300	300	300	300	300	300	300
36	44423640	Ռետինե միջադիր d= 3/4"	-	-	-	-	-	300	300	300	300	300	300	300	300
37	44163200	Ամրան (կլիպս) Մ/Պ խողովակի 1/2 համար դյուբել պտուտակով	-	-	-	-	-	3400	3400	3400	3400	3400	3400	3400	3400

38	44163200	Ամրան (կլիպս) Մ/Պ խողովակի 3/4 համար դյուբել պտուտակով	-	-	-	-	-	3900	3900	3900	3900	3900	3900	3900	3900
43	44163200	Կցաշուրթ պողպատե d=50	-	-	-	-	-	22440	22440	22440	22440	22440	22440	22440	22440
54	44163200	Անցում բրոնզե . 1/2" - 1/2" ա/պ	-	-	-	-	-	5680	5680	5680	5680	5680	5680	5680	5680
56	44163200	Անցում բրոնզե . 3/4"- 3/4" ա/պ	-	-	-	-	-	4840	4840	4840	4840	4840	4840	4840	4840
68	44411425	Սողնակ մետաղական d=200	-	-	-	-	-	350896	350896	350896	350896	350896	350896	350896	350896
69	44411425	Սողնակ մետաղական d=150	-	-	-	-	-	154736	154736	154736	154736	154736	154736	154736	154736
70	44411425	Սողնակ մետաղական d=100	-	-	-	-	-	216744	216744	216744	216744	216744	216744	216744	216744
75	44411751	Ճկախողովակ d=1/2" , 70սմ	-	-	-	-	-	25020	25020	25020	25020	25020	25020	25020	25020

76	44521120	Փական կախովի 70մմ	-	-	-	-	-	12840	12840	12840	12840	12840	12840	12840	12840
77	44511340	Գայլիկոն կոնաձև	-	-	-	-	-	7988	7988	7988	7988	7988	7988	7988	7988

*Վճարման ենթակա գումարները ներկայացվելու են ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000358920100
ՀՎՀՀ 00000911

տնօրենի ժ/պ ----------Գ. Ավետիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Էկոմիքս» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ա. Բաբաջանյանի 169
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052822070211001
ՀՎՀՀ 01255701

տնօրեն ----------Ս. Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 2021թ. կնքված
ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/53-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2021թ. կնքված
ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/53-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն